ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2016թ.փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, /ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաժինը/ այսուհետ՝ ՍԱՏԲ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Երևանի տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց(այսուհետ՝ կողմեր)հրավիրվում են հայտարարագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ /այսուհետ՝ Խորհուրդ/:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները /հայտերը/ կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Քանաքեռ -Զեյթունի տարածքային բաժին՝ մինչև 2016թ.հուլիսի 6-ը / հասցեն՝ք.Երևան, Դ.Անհաղթի 11, հեռ.011518834/:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա/ սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը,

բ/ սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագրում, որը տրամադրվում է սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած կողմերին:

ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
սոցիալական աջակցության Քանաքեռ-Զեյթունի
տարածքային բաժին